

Նակուող ալեհեւ շարք մըն է, գագաթները
կորացած։ Ասիկա յրապաշտուրեան Հայ
արուեստին վրայ թողած հետքեղէն է որ
հետզհետէ շարունակուեցաւ։ Երեւանի
թանգարանին մէջ հազարաւոր տարիներու
հնութիւն ունեցող՝ Հայաստան գտնուած՝
պղնձէ կաւեղէն և տախտակեայ իրերու և
ամաններու վրայ այս գծածելին հասարա-
կօրէն հանդիպեցայ 1931 ին։ Նոյն իսկ
գորգաշինութեան արուեստը օգտուած է
այս գծածելին, գորգի գոտիներ, յատակ-

(Շաբութակելի)

3. Քիմիան

ԱՆԻՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ԱԿԶԵՒՑ ՄԻՆՉԵՒ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(*Georg. Akad. Rigaqumāvīzītā 1934, t. 9* 289)

નોર ટેક ગુણ

1863 թիվ

Կանգնած ենք 1863 թւականի շէմբին։
Դա հայ թատրոնի պատմութեան մէջ խիստ
նշանաւոր մի տարբեթիւ է։ Այդ շըշանում
Թիֆլիսի հայ թատրոնը ոչ միայն վերա-
կառուցւում է և դրւում նոր հիմքերի վրայ,
այլ և կարճ ժամանակում անում է հե-
տաքրքիր և նշանակալիր ոռոնց ժեւ-

Եւ եւր և սշասակալից որոնումներ; Ո՞րո՞նք են այս շրջանի թատրոնական շարժման բնորոշ երեւոյթները: Ամենից առաջ կազմւում է սիրողների դրամատիկական մի նոր խումբ: Այս անգամ հրապարակ են գալիս Թիվֆլիսի Ներսիսեան դպրոցի ուսումնարար թատրոնաւեր սահերը - Միհրզատ Ամերիկեան, Օրտաչչու Սուբիասեան, Զարդեղեան, Աղիքէզեանց, Նիկողայոս Մատինեանց, Առուիեան և ու

բիշներ, որոնք Պերճ Պոչկեանի գլխաւուրութեամբ զիմում են իրենց ուսուցիչ թակոր Կարինեանին և խնդրում նրա աջակցութեանը Թիֆլիսում հայ թատրոնական սեմ ստեղծելու համար՝

կամ բայ ստեղծելու համար՝։
Կարինեանը տեսնելով թատրոնի առաջաւ-
ղիմութեան նախանձախնդիր և գործելու
եռանդով համակւած սաների վառ ձգտու-
մը, իսկոյն ըմբռնում է, որ հողն արդէն
պատրաստ է և թատրոնի պահանջն զգա-
լի, խոստանում է օգնել։ Մի երեկոյ ու-
սանողներին թէյով հիւրասիրելուց յետոյ,
անձնում է նրանց իր նոր զբած «Վար-
առեանց պատերազմ» ողբերգութիւնը և ի-
ւառունք է տալիս, որ քննադատեն և իրենց
կատողութիւնները մատիտով նշանակեն
լիէսի լուսանցքներում։

1. Տեսականի յուշերը:

ներ, կեզդոններ կազմելու համար անոնց մէ, որոնք հետզհետէ կլորի տեղ անկիւնաւոր կեռերու վերածուեցան, այս կեռերուն որոշ բացատրութիւն մը չգտնելով օտար գեղարուեստագէտ-պատմագէտներն ստիլուեցան hook designe բաելով բաւականանալ, որ կը նշանակէ կեռաձեւ զժադրութիւն: Այս հատակոտորին մէջ ալ թըռչունները առաջին տեղը կը բռնեն: Կան նաև հայ արուեստին հնուց ծանօթ բուսական ձեւեր ալ:

— « Լաւ կարդացէք, - դիմում է կարինեանն
իր սաներին, - ուշագրութեամբ մի քանի ան-
գամ կարդացէք, մի օրւայ, մի շաբաթւայ գործ
չէ այդ, իւրաքանչիւր բառը կշռած, կշռադա-
տած է, ամէն մի սողի վերայ երեք պտղունց
քթախոս է փչացնել (կարինեանի սովորու-
թիւնն էլ մտածելիս շուրա շուրա քթախոս քա-
շել), մի ամիս ձեզ ժամանակ եմ տալիս »:

Թատրոնասէր սաները մի ամսւայ փու-

մէլիքեան, գեղարւեստասէր – թատէրասէր: Գալիս են նաեւ թատընի սիրով կրակւած ուսանողները – Պեղմ Պոօշեան, Թովմաս Զարդեղեան, Միհրդատ Ամերիկեան, Գէորգ Ազիրէգեան, Արտաշէս Սուբիասեան, Արովիան, Ոռուսաստանից նոր եկած երիտասարդ Վաղարշակ Շահիսաթունեան, Ստեփաննոս Մատինեան և ուրիշներ:

ի՞նչ ինպիրներ են շօշափում ժողովում,
ի՞նչպիսի հարցեր արծարծում:

Ժողովը բանում է նախազահ Գրիգոր իզմիրեանը: Նա համառոտ գծերով պարզում է Ներսիսաւարտ երիտասարդների ջերմ ցանկութիւնը - Թիֆլիսում կազմել մշտական զերասանական խումբ և տալ սիստեմատիկ ներկայացումներ: Առաջարկութիւնը ջերմ ընդունելութիւն է գտնում. բոլորն էլ շեշտում են և ընդգծում, որ

Թատերասէր ուսանողները մնում են յուշատ և մենակ զրովթեան մէջ։ Նրանք սրձեալ կանգնում են մի մեծ հարցանի առաջ, ինչ անել, ում դիմել, ո՞ւ առերասէրի զուոք գնալ։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՔ

Երեք օր անց, Ներսիսեան դպրոցի հո-
գաբարձու քժիշկ Յարութիւն Յովհաննի-
սեանի տան դահլիճում, երեկոյեան ժամը
լեցին, գումարլում է մի ժողով: Դա 60-
սկան թւականների թատերական առաջին
փողովն է, որ լուրջ կերպով զբաղւում է
թատրոնական հրատապ և էական խնդիր-
ներով: Այդ ժողովին մասնակցում են թիֆ-
սիի յայտնի հայերից Գրիգոր Իզմիրեան,
ուժ. Յարութիւն Յովհաննիսեան, Վասիլ
Խոջայեան, իշխաններ Միքայէլ ու Գրի-
գոր Բէհրուղեաններ: Հրաւիրլում են նոյն-
պէս Ներսիսեան դպրոցի ուսուցիչները,
որոնցից երկուսն արդէն յայտնի էին զբա-
ղան - թատերական ասպարիգում: Գրան-
էիր առաջեն Մերակ: Պատեաննեանն էր,

— «Վրացախօսութեան թագաւորութիւնն էր, - վկայում է Պերճ Պուշեանը («Թատրոն» 1899 N. 2, էջ 56), - վրաց լեզուն էր այն ժամանակ արիապետում թիֆլիսի հայութեան

մէջ: Առանց բացառութեան, միապէս վրացերէն էին խօսում ոչ միայն Վրաստանի խորգաւաններում, այլ և Թիֆլիսում։ Հայերէնը յեղանդում էր «վանքի շկոլի» — Ներսիսէան դպրոցի պատերի ներսը և երկու զոյգ մի կենտ գաւառացի նորիկների տներում։

Անհրաժեշտ էր վերացնել բացասական
այդ երեւոյթը։ Խսկ ո՞վ կարող էր նպաս-
տել այդ հանգամանքին։ Կար մի փակտօր,
որը կարող էր վճռական բեկում առաջ
բերել։ Դա թատրոնն էր։ Ուրեմն հայ լե-
զուն ժողովրդի բոլոր խաւերի մէջ ընդ-
հանրացնելու, արմատացնելու համար ան-
հրաժեշտ էր Թիֆլիսում ունենալ թատրոն։
Այսպէս է զրում հարցը ժողովում։ Այդ-
պէս է ապացուցում և շեշտում ժողովի
նախագահ՝ Իզմիրեանը։ Նա խոստանում
է Թիֆլիսի հայ թատրոնը ժողովրդի ստո-
րին խաւին մատչելի դարձնելու համար
իր աջակցութիւնն ու օգնութիւնը։ Նոյն
կարծիքն է յայտնում բժիշկ Յովհաննի-
սեանը և խոստանում է Թամամշեանի
թատրոնում հայերէն ներկայացումներ տա-
ռու համար իրաւունք ստանալ։ Միեւնոյն
ուսակէտն են արծարծում և միւսները։
Մինակ Յակոբ կարինեանը կանգնում է
ուարբեր զծի վրայ։ Նա «սկզբունքով ըն-
դունում է Թիֆլիսում հայ թատրոնի ան-
հրաժեշտութիւնը, բայց ներկայացումները
աղաքային թատրոնում կազմակերպելը
ամարում է անիրազործելի։ Առանձնա-
լէս հակառակում է Ներսիսաւարտ ան-
հործ երիտասարդների բեմ բարձրանա-
ռն և նրանց թատրոնական գործի հա-
ամենութեանը։

Կարինեանի հակառակութեան թելերը,
նկասկած, կապւած էին նրա պիէսի սուր
ննադատութեան հետ։ Այնուամենայնիւ,
ուա բացասական կարծիքը խորապէս
խրեցնում է թատրոնի սիրով համակաւած
ութասարդներին և ահա մի վայրկեան
ժողովում տիրում է խոր լոռութիւն։ Հար-
ուոր էր փոխել տիրող արամազդրութիւնը։
արկաւոր էր շոյել վարժապետ կարինեա-
սը։ Այդ մօմէնտն ըմբռնում է ամենից
առաջ Պերճ Պոշեանը։ Նա լաւ ճանա-

չելով իր « հայրապետիւ » վարժապետի բնութիւնը, ոտի է կանգնում և սկսում զարկել կարիքնեանի սրտի լարերին.

— « Վարժապետ, — սկսում է Պոչեանը, — քո որդեսէր գորովազութ սիրառ յայտնի է քո սիրելի զաւակներիդ, որոնց այժմ տեսնում ես առաջիդ խոնարհած (նա ազբով է անում ընկերներին և նրանք բոլորն էլ ուղի կանգնում, գլուխները քաշ ձգում): Մենք գիտենք, հայր՝ վարժապետ, որ ինչքան էլ անառակ որդու նման քեզ վշտացրած լինենք, դարձեալ քո հայրական գիրկը բաց է մեզ համար: Մեր յարգելի ուսուցիչ Պատկանեանը նոյն չափով սիրում է մեզ: Զեր երկուսի մէջ ծագած մասնաւոր տարակուսանքը մեզ դռնէ դուռը ձգեց, բայց որովհետեւ այս պատւելի, ազգասէր իշխանների ներկայութեամբը չարը խափանեց, թող բարին առաջնորդի: Աղաչում ենք մեր երկու բազմերախո հոգեւոր ծնողներիդ — մեր ուսուցիչներիդ, նոյնպէս և պարոն Աբամէլիքեանցին, երեքդ միասխին, ինչպէս յառաջ՝ միաբան սիրով խրախուսեցիք մեզ և ուսման հետ հայ թատրոնի ճաշակը զարթնացրիք, այսօր էլ նախկին համերաշխութեամբ ձեռք ձեռքի տւէք և ձեր, մեր ու բոլոր հասկացող հայերի սիրած մայրենի թատրոնի գործը ձեր խոնարհ որդւոց հետ յառաջ տարէք »:

Պոօշեանի ճառը խորը տպաւորութիւն
գործում և ներգործում ժողովի բոլոր
մադամների զգացումների վրայ և նրանք
գեւորւած գոչում են.

— Եատ լաւ են ասում, վարժապետ,
դնեցէք այս պատւական երիտասարդնե-
ին և շուտով քաղաքային թատրոնում
մեզ մի հայերէն Ներկայացում տւէք:

Ժողովականների գիմումը, միջամտությունը բեկում են առաջ բերում կարինեական մէջ և նա ժպիտը երեսին պատասխանում է.

— Ոչինչ, մեր գծելն են, կը բարկա-
սնք էլ, կը սիրենք էլ:

Նոյն ժողովում էլ հաշտում են թարոնական գործին նվիրած երկու հակառար ոխերիմները - Յակոբ Կարինեանը և Իքայէլ Պատկանեանը, որոնք ամբողջ կուռ տարի խռով էին իրար հետ։ Այդ-

պիսով ժողովում ստեղծում է թատրոնական ոյժերի համերաշխութիւն, ներդաշնակութիւն։ Այնուհետեւ ժողովի օրակարգում դրում է մի այլ հրատապ և հիմնական հարց։ Ինչ ներկայացնել, ո՞ր պիէսն ամենից առաջ բեմադրել։ Թատրոնական ուշադրութարից նկատի են առնում Ա. Վանանդեցու «Միհրդատ»-ը, կարինեանի «Շուշանիկ»-ն ու «Վարդանանց պատերազմը» և Պատկանեանի «Շուշանիկ»-ը։ Սակայն դրանցից ո՞ր մէկին տալ առաւելութիւնը, գերակշռութիւնը։ Այս այս հարցն առաջ է բերում մտքերի աշխոյժ փոխանակութիւն։ Վճռում է ներկայացնել Պատկանեանի «Շուշանիկ»-ը։ Արւում են նաեւ բազմաթիւ գործնական առաջարկներ՝ հետազայ աշխատանքն առողջ և հաստատուն հիմքերի վրայ դնելու համար, որից յետոյ փակում է ժողովը։


Հետեւեալ օրը պիէսի հեղինակ Պատկանեանի ներկայութեամբ և առաջարկութեամբ բաժանուում են դերերը. կանացի դերերը իգական սեռից ոյժեր չլինելու պատճառով՝ յանձնուում են երկու զիմնազիստի: Այնուհետեւ, ամէն երեկոյ, Պատկանեանի ներկայութեամբ, տեղի են ունենում փորձերը: Հերակլի իշխանի և իշխաղոն թումանեանի շնորհիւ ձեռք է բերուում նաեւ քաղաքային թատրոնը և ներկայացման իրաւունքը: Իշխաղոնը 350 մանէթ միանւագ վճարով ստանում է թատրոնի կապալառու իտալացի Տորոչելլոյի թոյլտութիւնն առաջին ներկայացման համար: Որոշւում է և ներկայացման օրը: Եօթն օր առաջ Պերճ Պոոշեանը գնում է Ներսիսեան զարոցը Պատկանեանի մօտ, որպէս զի ստանայ նրանից պատրաստած ձեռագիր ափիշէն և տպագրել տայ: Բայց յանկարծ փոխուում է իրերի գրութիւնը: Կարինեանի խորհրդով և միջամտութեամբ Պատկանեանն իր ահէսո չի տայիս ուսա-

նողներին և կանգնեցնում նրանց այնքան
եռանդով սկսած գործը։ Տիրում է ընդ-
հանուր յուսախաբութիւն և յուսալքում...

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

«ԱՐԴԱԿ Բ.» — Հեղ. Խորէն վ. Գալֆայեան:

Արեգումը, ծանր հարւածը, սակայն,
չի կարողանում ընկճեցնել թատերասէր
ակտիւ, վառվոռւն երիտասարդներին։ Նը-
րանք վճռում են Պատկանեանի «Շուշա-
նիկ»-ի փոխարէն բեմադրել Խորէն վ.
Գալֆայեանի «Արշակ Բ.» ողբերգու-



զեղս զոօշեամց

թիւնը. բայց կար բացասական մի հանգամանք: Պիէսը զրւած էր տաճկահայ բարսառով, որին անծանօթ էր Թիփլիսի հայ հասարակութիւնը: Անհրաժեշտ էր հարթել լեզւական խնդիրը: Եւ ահա Պոօշեանն իսկոյն անցնում է զործնական աշխատանքի: Յուրաքանչեան սենեակում նստած՝ Արարատեան բարբառի է վերածում պատմական պիէսը:

— «Մի ցուրտ օր է, - զրում է Պոշեանն իր յուշերում, - յուսակտոր գարձել եմ Պատականեանցից և ձեռքս առել Գալֆայեանի Արշակ Բ-ը, նստել եմ թարգմանելու։»

Գործը ծանր է յառաջ գնում, մատներս

գրիչ չեն բոլում, տունս սառնամանիք է, վառելիք չունիմ, ծոցս վառարանի պաշտօն է կատարում, բերանիս տաք գոլորշին օգնում է ծոցիս:

... Առքերիս մինը բարձրացնելով, մինը ցած զնելով, սրթսրթոցով զլվիկախ թարգա-մանած եմ, երբեմնապէս էլ տաքանալու հա-մար գրիչը վայր եմ դնում և սենեկում արագ արագ քայլեր անում » :

Այսպիսի ծանր պայմաններում Պռօ-
շեանը ոռւսահայ բարբառի է վերածում
«Արշակ Բ»-ը: Այդ ձանձրալի, բայց վեհ
աշխատանքը տեւում է մի ամբողջ օր -
առաւօտից մինչեւ երեկոյ: Երեկոյեան ու-
սանողները հաւաքւում են Պոօշեանի սեն-
եակը, ուր ներկայ է լինում նաև Ռու-
սաստանից նոր եկած երիտասարդ ուսանող
Շահիսաթունեանը: Կարգում են պիէսը,
բաժանում դերերը և սկսում փորձերը:

Բայց ահա նրանք կանգ են առնում
երկու խիստ էական և հրատապ հարցի
առաջ. առաջինը՝ ով պիտի առաջնորդէր,
զեկավարէր զերակատարներին. ով պիտի
ուղղութիւն տար փորձերին, ներկայա-
ցմանը: Հարկաւոր էր թատրոնական գոր-
ծին հմուտ մի ոէժիսօր: Երկրորդը, որ
ամենակարեւորն էր, չկային նիւթական
միջոցներ: Տնտեսական ապահովութեան
հարցը կանգնում է ուսանողների առաջ
իր ահաւոր կերպարանքով:

Հանգամանքները նպաստում են: Այս-
ակնկալ կերպով հրապարակ է գալիս մի
թատերասէր, որը թատրոնական գործը
կազմակերպելու և ուրոյն ծրագրով առաջ
տանելու համար իդէալիստ երիտասարդ-
ներին առաջարկում է իր նիւթական օգ-
նութիւնը: Դա Ներսիսեան դպրոցի հոգա-
բարձու Ռոմանոս Նաղիբեանն էր: Իր
ժամանակի հասարակական այս գործիչը
յայտնի է դառնում իր նիւթատութիւն-
ներով և բարեգործական ձեռնարկութիւն-
ներով: 1861 թւին Ստ. Նազարեանն իր
տնտեսական ծանր զրութեան պատճառով
ստիպւում է փակել «Հիւսիսափայլ»-ը:
Օգնութեան է համանում Նաղիբեանը: Նոյն-
պէս նա անկեղծ սիրով կապւում է թա-

տերասէր ուսանողների հետ և հետագայ
յում էլ նպաստում թատրոնի զարգա-
ցմանը:

Նաղիբեանի, Եազոն Թումանեանի և
Գրիգոր Իզմիլեանի աջակցութեամբ վե-
րանում է նիւթական պատնէշը։ Հար-
թում է նաեւ ռէժիսօրի հարցը։ Կաղի-
բեանի խորհրդով ուսանողները զիմում են
Պօլսից Թիֆլիս եկած, եւրոպական կըր-
թութեան տէր մի երիտասարդի, որի ա-
նունն էր

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԿԵԱՆ

ի՞նչ աշխարհայեցք և ուղղութիւն ունէր այս երիտասարդը, ո՞րն էր նրա դրօշը:

Աղաբէկեանը հէնց սկզբից կանգնում
է կրօնասէր - ազգասէլների դրօշի տակ:
Չուլում է պահպանողական, հնապաշտ
ուղղութեան դրօշակակիրների այն քանա-
կին, որը թէեւ ջերմ պաշտպան էր եւրո-
պական լուսաւորութեան և պայքարում
առաջադիմութեան համար, սակայն սերտ
օղակւած էր պատմական կեանքի հետ:
Այս էր Աղաբէկեանի ուղղութիւնը:

1860 թւականից նա թիֆլիսում հրա-
տարակում է «Կռունկ Հայոց Աշխարհին»
ամսագիրը, որ հանդիսանում է իր ժա-
մանակի վառ ազգամիջութեան, եկեղեցա-
կանութեան և պահպանողական մտայնու-
թեան ամենաեռանգուն արտայայտիչը:
Այդ մամուլի գրօշի տակ համախմբում են
պահպանողական երիտասարդները – Գ.
Մուրատեան, Յակոբ Կարինեան, Առաքել
Արարատեան, Ե. Բաստամեան, Մ. Մա-
րտուրեան, Մելիք Ազարեան և ուրիշներ:

Աղաբէկեանն ապրում է գլխաւորապէս պատմական անցեալով և ջերմ պաշտպան անդիսաննում անցեալի աւանդութիւններին: Հայ ժողովրդի փառքն ու պարծանքը ուսնում է նա միայն պատմական անցեալի մէջ: Այդ պատճառով էլ կոչ է անում հանաչել անցեալի պատմութիւնը, սիրել անցեալի հերոսները, համակւել նրանց աղափառներով: Այդ է պատճառը, որ ա մեծ նշանակութիւն է տալիս պատմաւան պիէսներին: Այդ նպատակով էլ գեռ

1861 թւին զրում է «Գալեգին» պատմական սղբերգութիւնը:

— «Ազգային պատմութիւնը պիտի լինի
մեր ամսագրոյն այս տարւայ հրատարակած
յօդւածները, — գրում է Ազգաբէկեանն իր
«Կոսունկ Հայոց Աշխարհին» լրագրի խմբա-
գրականում (1863 դ. տարի, թիւ Ա. Էջ
14-15)... Պատմութիւնը այն հարկաւոր ուս-
մունքն է, որ մարդուն անցկացած դէպքերու
և անցքերու վրայ տեղեակ կանէ... Ուրեմն
լաւ է, որ մենք անդադար մեր հին և նոր
ազգային պատմութիւնը կարդանք, քննենք,
զննենք, մենքնենք և ինչպէս մի լոյս, մի յոյս
կարողանանք մեր առաջը ունենալ մեր որո-
նելու ճանապարհում ազգային և բարոյական
լուսաւորութեան մէջ» :

Աղաքէկեանը ժխտում է կուսակցութիւնների գերը։ Սերտ միութիւն, միասնականութիւն, մի ամբողջութիւն։ Այդ դրօշի տակ միայն հայ ազգը կարող է զարգանալ և առաջադիմել։ Այսպէս է դնում հարցն Աղաքէկեանը։ Այդ աշխարհայի այլացով և զբական ուղղութեամբ էլ գործում է և պայքարում։

Նա սիրով է ընդունում ուսանողների
առաջարկը և ոչինչ չի խնայում, որ հաս-
տատ հիմքերի վրայ զրկի թիֆլիսի հայ
թատրոնը: Առանձին սիրով էլ ղեկավա-
րում է փորձերը:

Միհրդատ Ամերիկեան: Կոմիտէտի գեղասանական խմբի մէջ կենտրոնական տեղ է զրաւում նաեւ մի այլ Ներսիաւարտ: Դա Միհրդատ Ամերիկեանցն է: Այս լաւագոյն դերասանը Ներսիսեան դպրոցում տրւած ներկայացումների բովից է դուրս քալիս: Կարճ ժամանակում հոչակւում է նա իբրև երկու հակասական տիպերի՝ առաջնակարգ ողբերգակի և զւարճախօս՝ կատակարանի կենդանի արտացոլող: Նա բազմաթիւ տրամագծօրէն իրար հակառակ խարակտերներ է կերտում, մէկը միւսից աւելի տիպիկ, կենդանի և պատկերաւոր: Խաղի այդ որակային փոփոխութիւնը ստեղծագործական խոշոր ընդունակութիւնների արդինք է: Ահա թէ ինչու Ամերիկեանը կարճ ժամանակում իր վրայ



Միհրդատ Ամերիկեանց

— «... Հօրից բնական ճանապարհով ստացած հաստ շրթունքները, ծաղկատար երեսը, խոժոռ և տգեղ զէմքը, իւրացրած անճոռնի ծամածութիւնները, խօսակցութեան ժամանակ, աղն ու համն էին իւր կոմիկութեան»:

... Հարկաւոր չել նրան դերը զիտենալ,
որ կարողանար ծիծաղ շարժել կամ ուզած
անձին հասարակութեան մէջ խաղը ու խայ-
տառակ անել, հերիք էր Ամերիկեանցին եթէ
հագնէր, դիցուք, Տէր-Գրիգորեանցի «Ժլատ»
պիէսում ժլատի աղտոտ և հնոտի զիշերա-
հանդերձը և կաղին տալով բեմի վրայ կանգ-
նած՝ ձեռք ու երես շարժէր և ծումատէր։
ամէնքի ազգին անմիջապէս կը ներկայանային
Թիֆլիսին քաջ ծանօթ և ատելի ժլատ անձ-
նաւորութիւններից մէկն ու մէկը, իհարկէ,
որին գերակատարն ուզեցել էր շեշտել, իրանց
դաժան պատկերով և ամենքին զգաւանք, հետն
էլ ծիծաղ կը յարուցանէին։

Պատահում էր երբեմն, որ ներկայացման
հետեւեալ օրը ծաղրած անձի կողմից միշտ
նադէպք եւս յառաջ էր գալիս, հայհոյանք-
ներ լսել, բնակարանից զրկել և ալին;

... Ալբակ Բ.-ի ներկայացումից անմիջապէս յետոյ՝ Ամերիկեանցը թիֆլիսում աչքի ընկաւ, փողոցներում մատով էին ցոյց տալիս, տես ու անծանօթ նրան ողջունում էին, իսկ բեմի վրայ նրա բացակայութիւնը մեծ տիրութիւն էր պատճառում («Թատրոն» Միհնդաս Ամերիկեանց, 1895 թ. 3, 2-րդ տարի, էջ 65-66 »):

իսկ «Մի ակյայտ բատրուհական գործիչ»
յօդւածում գրում է.

— «Ուրիշ բառ չեմ գտնում հանգույցեալ Ամերիկեանցին յատկացնելու. նա միապէս յաջողակ էր ողբերգութեան, կատակերգութեան, մենախօսութեան, դեկուացիայի և թատերական բոլոր ճիշդերի մէջ («Թատրոն» թ. 2, Թիֆլիս, 1899):

Այդպէս էր նա և զբական ասպարից գումար: Դեռ Ներսիսեան դպրոցի ուսանող, Ամերիկեանը դպրոցում հրատարակում է ձեռագիր մի թերթ, որը շուտով զրաւում է ուսուցիչների ուշադրութիւնը: Հետազայում, 1872 թիւն, երբ Գրիգոր Արծրունին Թիֆլիսում լոյս է ընծայում «Մշակ»-ը, Ամերիկեանը դառնում է թերթի խմբագրութեան պատասխանատու աշխատակիցներից մէկը: Այդ շրջանումն էլ նա «Մշակ»-ում, զծի տակ, տպում է իր կծու ֆէլիքտօնները «Զաքոն» ստորագրութեամբ, որոնք իր ժամանակ կարդացւում են յափշտակութեամբ: Նոյնիսկ զրում է բանաստեղծութիւններ: «Գարունը Հայոց» («Կռունկ Հայոց Աշխարհի» 1860 թ.), «Որբիկ» («Մեղու Հայաստանի», 1866 թ.), որոնք գրւած են սահուն պարզ լեզուվ և այսօր էլ կարդացւում են առանձին հաճոյքով: 1879 թ. ինտերւալ Ծին նա ատրճանակի գնդակով լերջ տւեց իր կեանոին:

Մտելիանենու Մատինեան։ Նոյն պատմաշը ջանի դերասանների շարքում կայ հազրացիւր մի կառակարան եւս։ Դա Մտելիաննոս Մատինեանն է, որ իր վարակու

Խաղով և աննման նույրը հիւմօրով ու մի-
միկայով կարողանում է իսկոյն փոխել
հասարակութեան տրամադրութիւնը և ծի-
ծաղի հետ շատերի աչքերից արտասուց
խլել։ Այս տաղանդաւոր կօմիկի կերտած
տիպերի մէջ կենարոնական տեղ է գրաւում
Յովկաննէս Գուրգէնբէգեանի «Հաջի Սու-
լէյման» պիէսի հրեայի տիպը, որի մասին
գերասան Գ. Զմշկեանը խօսում է հիաց-
մունքով.

— « Միայն Մատինեանի պէս տաղանդը կարող էր ստեղծել, — գրում է Զմշկեանը, — այդպիսի մէկ թոյլ գծագրւած անձնաւորութիւնից այն տիպը, որին իմաստափրելու համար տարիներով աշխատում են շատ նշանաւոր հեղինակներ։ Վարագոյրը բարձրանալուց յետոյ մինչեւ նորա իջնելը, ոչ մի սուր աչք, ոչ մի սքանչելի դիտակ չէր կարող գերասանի գրիմի տակից ճանաչել գերասանի անձնաւորութիւնը, նորա երկար մօրուքը, խիտ յօնքերը, նուրբը, բայց չմշկած շրթունքները, երկայն բեկները, ոչ մի բան շինծու չէր թում։ Խոկ հազուսողը, այն մանրամասները հագուստի մէջ, որ միայն բնական է Պարսկաստանցի հրէա գալալին, կօշիկները, գգակը, հրէայի բնական՝ անվտանգ ժամանակը, խրոխա և հակառակ դէպրում վախկու՝ բնաւորութիւնը, ոչ մի թերութիւն, ոչ մի անբնականութիւն չէր կարելի նկատել բեմի վրայ ձեւացրած հրէայի մէջ։

Բացի այս ամենը գերասանը ուսումնասիւրել էր ամենամանրամասնօրէն հրէա դալալի խօսակցութեան ամէն մէկ ձեւը, այն ինքնուրոյն հայ լեզւի ժարգօննը, որ սեփական է միայն հրէա դալալին և որի գործ ածելը անհնարին է հայի համար:

Ամբողջ կէս ժամ մինչեւ պիէսայի վերջը, գերասանը մենակ է համարեա բեմի վերայ և հասարակութիւնը, ուշի ուշով ծիծաղից թուլանալով, հետեւում է նորա խաղին, նորա ամէն մէկ միմիկային և վարագոյքը ծածկւելուց յետոյ, սաստիկ ծափահարութիւնով դղրդեցնում է թատրոնի դահլիճը։ Այսպիսի համակրութեան արժանանում են միայն տաղանդները։

Արտաշեան Սուքիսաւեան: Խմբի լաւագոյն
ըրասաններից մէկն էր Արտաշէս Սու-
ասաւեանը, որ ապրում, շնչում և ստեղ-

Ժագործում է Թիֆլիսի հայ թատրոնի վրայ: Նա իր ժամանակի առաջին դերասանն է, որ խարակտերիկ և տեղական կինտոյի և հաստափոր վաճառականի խօսակցութիւնն ու դէմքի գծագրութիւնը փոտոգրաֆիական ճշտութեամբ պատկերում է և կերպարանաւորում: Թիֆլիսի հայ թատրոնի բեմի վրայ կերտում է նա բազմաթիւ տարբեր խարակտերներ: Դա պատցուցում է Սուբիասեանի ստեղծագործական վարպետութիւնը: Այս շնորհալի դերասանին գնահատում է նաեւ Գարբիէլ Սունդուկեանը, որին նվիրում է իր պիէսներից «Ոսկան Պետրովիչն էն կինքումը» կատակերգութիւնը: Այդ պիէսի առաջին էջի վրայ տպած է նրա լուսանկարը: Այս դերասանը եւս շուտ է հեռանում հայ թատրոնից:

Առաջադիմական քայլեր անում և անց-
նում առաջաւոր դերասանների շարքը
թովմաս Զարդեղեան, Աահակ Ադիբէգ
Մէլիքեան, Պետրոս Վարչամեան, Պօղոս
Պէնըլեան և Յովհաննէս Լուսիկեան, որոնց
իրենց մուածւած, նուրբ և զեղարւեստա-
կան խաղերով դերասանական խմբին ա-
ռանձին փայլ են տալիս: Այդ դերասան-
ներից մի քանիսը, սակայն, թողնում են
բեմը և ձեռնադրւում քահանայ:

Ահա զերասանական այսպիսի լաւագոյն
ոյժերով կօմիտէն առաջ է տանում թիվ-
լիսի թատրոնական զործը և անում զե-
ղարւեստական նշանակալից նւաճումներ:

ՆԿԱՐԻՈՒՄ ԵՆ ԹԱՏՐՈՒՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ
ԵՒ ԴԵՐԱՍՍՆԱԿԱՆ ԽՈՒՄԲՔԸ

Երբորդ ներկայացումից յետոյ համա-
խմբւում են բոլոր գերասաններն ու թա-
տրոնի պատսախանատու, զիվաւոր գոր-
ծիչները և միասին նկարւում: Դա թիֆլիսի
թատրոնական հայ արւեստագէտների ա-
մենաառաջին լուսանկարն է, որ ունի իր
պատմական նշանակութիւնը հայ թատրո-
նի համար: Այնտեղ դուք ծանօթանում
էք ժամանակաշրջանի ոչ միայն գերասան-
ների, այլ և ոչժիսօրի, նկարչի, դրամա-

տուրքների և թատրոնական երգիչների ու
գործիչների հետ։ Ամէն մի թատրոն կա-
րող է պարծենալ իր աշխատակիցների
նման մի խմբով։ Այդ պատկերը կրում
է. «1863 ր. բատրունական խորմբը և դե-
կավարները» մակագրութիւնը։

Սակայն նշենք այն, որ պատկերահաւաքութեան ժամանակ ներկայ չեն լինում դերասանուհիները և կօմիտէտի անդամներից չորսը: Նոյն թականի թատրոնական բո-



Արտաշես Սուքիասեան

լոր արևեստագէտների ամբողջական ցուցակը ձեռքը բերինք ժամանակի թատրոնական գործիչ և դրամատուրգ՝ բժշկութեալ Միհայէլ Տէր-Գրիգորեանի ձեռագիր արխիվից, որը բնորոշ զաղափար է տալիս մեզ դերասանական ամբողջ խմբի և կօմիտէտի անդամների մասին։ Այդ տեսակէտից էլ հետաքրքիր է յիշեալ ցուցակը, որ զրաբւորում է այս պատկերը.

ԳԵՐԱՍԱՆՆԵՐ՝

ԱՐՏԱՇԵԼ ՍՈՒԻՔԻ ԱՍՍԱՆ - կօմիկ և զրամատիկ
ՅՈՎԱՆԴԻ ԱԲՈՎԱՆ
ՊԵՏՐՈՍ ՎԱՐԺԱՄՄԵԱՆ (յետոյ քահանայ)
ՍԱՀԱԿ ՄԴԻՔԻԳ ՄԵԼԻՔԻՄՄԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԲՂՋԱՆՆԱՆ
ՄԻՀՐԻՄ ԱՄՄԵՐԻԿԵԱՆ - կօմիկ և զրամատիկ
ՅՈՎԱՆՆԻԼԻ ԿՈՒՍԻԿԵԱՆ (յետոյ քահանայ)
ԹՈՎԱՄՄՍ ԶԱՐԴԵՂԵԱՆ
ՊՈՂՈՍ ԲՂԵՆՔԻԼԵԱՆ (յետոյ քահանայ)
ՎԱՂԱՐԺԱԿ ԾԱԽՆԱԹՈՒՆՆԱՆ - ողբերգակ
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԼՒՐ-ՑՈՎԱՆՆԻՍՍԵԱՆ - ՇՈւշանիկ մա-
կանունով
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԱՍԻՆԵԱՆ - կատակերգու

1863 թ. ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԵԽ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ



1. Արտաշէս Սուբիսանեան; - 2. Յովա. Արովեանց;
- 3. Բժ. Միք. Տ.-Գրիգորիսանց; - 4. Գէրդ Աղերէզեան;
- 5. Պէլճ Պիօշենչնչ; - 6. Բժ. Ռոմանոս Նաղերսան; - 7. Պետրոս Վարշամեանց; - 8. Մարկոս Աղարէկնան; - 9. Սահակ Աղերէչ-Մէլքընանց; - 10. Գր. Բէժանէնանց; - 11. Միհրան Ամրիկնանց; - 12. Գր. Իզմիրեանց; - 13. Յով. Կուռակնանց; - 14. Թոովաս Զարդեանց; - 15. Պողոս Բէնընեանց; - 16. Վաղարշակ Շահնաթունեանց; - 17. Գար. Սունդուկնանց; - 18. Կոստ. Տ.-Ստեփանեանց; - 19. Մէրքարեանց; - 20. Գէրդ Արովեանց; - 21. Բժ. Նիկ. Փուղինեանց; - 22. Սա. Տ.-Յովհաննիսեանց; - 23. Յար. Յարութիւնեանց; - 24. Սա. Մատինեանց; - 25. Յով. Քաթանեանց;

Դերասանութիներ

ՍՈՓԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ
ԵՂԻՍԱՐԻԹ Տէր-ԱԲՐԱՀԱՄՄԵԱՆ (յետազյում ախկ. Ապենէկ Զմշկեան)

Կոմիտէտի անդամներ՝

ԳՐԻԳՈՐ ԻՉՄԻՐԵԱՆ - Գիրէկոր և ընդհանուր կառավարէ
ՊԵՐԾ ՊԻՕՇԵՆՆ - Կառավարէ (իզմիրեանի օգնականը)
ԲԺԵԿԱՋԵՏ ՌՈՄԱՆՈՍ ՆԱԴԻՐԵԱՆ
ԲԺԵԿ. ՄԻՔԱՅԵԼ Տէր-ԳՐԻԳՈՐԵԱՆ (յետազյում թատրոպիկը)
ԲԺԵԿ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՓՈՒՂԻՆԵԱՆ - թատերագիր
ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿՆԵԱՆ - ապա. թատերագիր
ՄԱՐԿՈՍ ԱՂԱՐԷԿՆԵԱՆ - ռէժիսոր
ԱԼԵՖԻՔ ՍԻԼՉՆԻԿՆԵԱՆ
ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎՆԵԱՆ
ԳԵՈՐԳ ՄԴԻԲԼԻԴՆԵԱՆ - յուշարար

Գեղարվեստական բաժին

ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ՔԱԹԱՆԵԱՆ - նկարիչ
ԳԵՈՐԳ ԱԲՈՎՆԵԱՆ - երաժշտապետ
ԿՈՍՏԱՆԴԻՒՆ Տէր-ՍԵԲՓԱՆԵԱՆ - երգիչ (յետոյ քանայանց)
Մէրքարեան - երգիչ
ԵԱՐԱՐՄԵԱՆ - երգիչ
ՑԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ - երգիչ

Այսպէս՝ հաստատում է բիւջէն, կազմը ում զերասանական խումբը և թատրոնական ներկայացումները զրւում են աւելի կանոնաւոր հունի մէջ։ Եւ Թիֆլիսի հայ թատրոնը հետզիտէ նւաճումներ է անում և միաժամանակ ժողովրդականութիւն ձեռք բերում։ Բայց զեռ կան խոշոր բացեր, հիմնական, կարեւոր պակասութիւններ։ Թատրոնի վարչութեան առաջ ծանրանում են զեռ վճռական և հրատապ նոր խնդիրներ, որոնց նա հետզիտէ տալիս է զբական լուծում։

Ո՞րո՞նք են այդ խնդիրները։

Ա. Ռեկրտուարը։ Ամենից առաջ սուր կերպով զրւում է ռէպէրուուարի հարցը։ Կան պատմական պիէսներ, բայց չկան վօդլիներ։ Զկան ժամանակի կեանքը, միջավայրը, տիպերը ու նրանց հոգերաշակ Շահնաթունը, պատմութիւնը նոր պիէսներ։ Անհրաժեշտ էր վերացնել այդ բացը։ Դա ժամանակի պահանջն էր։ Բայց ինչպէս, ինչ ձեւով։ Բեմական պահանջը, սուր կարիքը յառաջ է բերում ստեղծագործող նոր դէմքեր։ Ռէպէրուուարի պակասը լրացնելու համար ամենից առաջ աշխատում են կօ-



Բժշկ. Միքայէլ Տէր-Գրիգորիան

միտէտի անդամները։ Փուղինեանի օրինակին հետեւում է բժշկապետ Միք. Տէր-Գրիգորիանը։ Նա փորձում է իր մտաւոր ոյժը և կարճ ժամանակաւ ընթացքում զրում տեղական կեանքից վերցրած մի շարք վօդլիներ - «Պէպօյի տկնուր», «Պառաւներուն խրատ», «Ժամատ», «Էշը կը դատէ», ձին կուտէ» և այլն։ Նոյն 1863 թւականին հանդէս է գալիս մի նոր դրամատուրգ՝ Գարիիլ Առներովեանը և զրում իր առաջին պիէսը - «Գիշերւան սարբը իւէր է»։

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԽՄԲԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1862 թիվ Դեկտեմբեր ամսի վերջն է։ Թիֆլիսի վանքի Մայր-եկեղեցու գաւթում համախմբւել է հայ հասարակութիւնը։ Այնա տեղ են թիֆլիսի ժողովրդի տարբեր խաւուրը - վաճառականներ, չինովնիկներ, ինտելիգէնտներ։ Այնտեղ են վրացախօս, ոռուախօս և հայ օրիորդներն ու կանայք։ Այդ հասարակութեան մէջ, վանքի արեւելեան պատի ներբոյ, կանգնած են երկու թատրոնական հին գործիչներ։ Դրանցից մէկը Միքայէլ Պատկանեանն է, միւսը՝ Յակոբ Կարինեանը։ Նրանց մօտենում է թատրոնի սիրով կրակւած, զինւորական մէծ փափախը զլիխն, շպօրաւոր - թրաւոր մի չինովնիկ երիտասարդ։ Դա Գէրդ Զմշկեան էր։ Երեքի խօսակցութեան նիւթն անդրադառնում է հայ բեմի և թատրոնական կուլտուրայի շուրջը։ Երիտասարդը Պատկանեանին առաջազրում է իր ուրոյն տեսակտը - Թիֆլիսում կազմել կանոնաւոր զերասանական արեւեստը զնել իր կոչման բարձրութեան վրայ։ Այդտեղ էլ վճռում է հարցը։

«... Յափշտակւած իմ մէջ վճռած հարցովս - «Լինել հայ դերասան», - գրում է Զմշկեանը, - ես մէկ առանձին ուրախութիւն զգացի, տեսնելով այդ երկու մեր հայութեան կօրիքէյներին՝ հանգուցեալ կարինեանցին և Պատկանեանցին, իմ ուսուցիչներին՝ Ներսիսկան ուսումնարանում եղած ժամանակս։

Ես և իմ ընկեր Կ. Զ. մօտեցանք այդ խլմբին։ Բարեւեցինք նորանց և մտանք ընդհանուր խօսակցութեան մէջ։ Խօսում էին թատրոնի վերայ։ Ես յայտնեցի իմ կարծիքը Մ. Պատկանեանցին, թէ լաւ կլինէր Թիֆլիսում ունենալ մէկ փոքրիկ կանոնաւորած խումբ, հայ ներկայացումների համար։ Մ. Պատկանեանցը յայտնեց, թէ նա արդէն աշխատում է...

— Կ'կամնանք, - ասացի ես, մենք փորձենք մէկ ներկայացում։

Այս կ իմ ընկեր Կ. Զ. մօտեցանք այդ խլմբին։

Այս կ իմ ընկեր օր։ Եւ ահա Թիֆլիսի խարփուխ անւանւած թաղում, Յակոբ Կարինեանի տան մեծ, զարդարւած գահին ձում, տեղի է ունենում թատրոնական լայն խորհրդակցութիւն։ Այդտեղ են թատրոնին նւիրւած կուլտուրական հին ոյժերը - Միք. Պատկանեանն ու կարինեանը։ Հաւաքւում են նաև զերասանները, թատերաբաէրները՝ մօտ 40 հոգի։ Մի նպատակ, մի գաղափար համակում է բոլորին - կանոնաւորել զերասանական խումբը և թատրոնը զնել աւելի լաւ հիմքերի վրայ։

— Ես և իմ ընկեր Կ. Զ. յափշտակւած ապագայ զերասանական փառքի երեւակայութեամբ, - գրում է Գ. Զմշկեանն իր թատրոնական յիշողութիւնների մէջ, - դիմեցինք գէպի հանգուցեալ Յ. Կարինեանի տունը՝ Խարփուխ անւանւած թաղը։ Մոտանք դահլիճը, մեծ, ահազին, զարդարւած գահին, լիք բազմութիւնով, մինչեւ քառասուն հոգի։ Մեզ մօտեցաւ տանուտէրը և յայտնելով մեզ իւր չնորհակալութիւնը, բացատրեց, որ այդ բազմութիւնը ապագայ զերասանական խումբն է։

— Այս, այս, մատաղ, շտապեց աւելացնելով Մ. Պատկանեանցը։ մէկը անպատճառ կանոնաւոր խումբ պիտի կազմենք նրանց հակառակի Խսկոյն կ'զայ Ն. Միքիմանեանցը։ նա մեր կառավարիչը պիտի լինի։ Առ այժմ խնդրեմ ծանօթ լինիք, և ծանօթացրեց ինձ ուսւ թատրոնական գործին հմուտ Շահինեանցի (ըստ Պոչշեանի՝ Յովհաննէս Շահինեանցի) հետ։

— Սա և Միքիմանեանցը կ'առավարեն մեր խումբը։

Գալիս է Նիկողայոս Միքիմանեանը և վճռում հարցը։ Կարինեանի աջակցու-

թեամբ կազմւում է թատերասէրների մի նոր խոռումը, որի մէջ մտնում են. Ն. Միքրիմանեան, Յովհաննէս Շաղինեան, Գէորգ Զմշկեան, Միք. Պատկանեան, յետոյ՝ իգմիքեան - Պոչեան խմբի գժգոն գերասանները - Ամերիկեանն ու Սուբիասեանը: Այնուհետեւ թատերասէրների ժողովը



Ամիրան Մամդիմեան

կազմում է իր ոչպէտուարը և անցնում գործնական, ակտիւ աշխատանքի:

«ՖԼԱՏ» — Հեղ. Միք. Տէր — Գրիգորեանի և «ԳԻՇԵՐԻԱՅ ՍԱԲՐԸ Խէր Է» — Հեղ. Գար. Սոնդուկեանի:

Երկրորդ ներկայացման, 1863թ. Հոկտ. 29-ին, հոգաբարձութիւնը առաջին անգամ բեմադրում է Տէր - Գրիգորեանի «Ժլատ» և Սոնդուկեանի «Գիշերւայ սարը խէր է» նոր պիէսները: Այս շրջանում Մուկւայից արձակուրով Թիֆլիս է գալիս Ամիրան Մանդինեանը և մասնակցում գերասանական խմբի ներկայացմանը: Նա ստանձնում է Արութիւն Ճարտարովի դերը և առաջին փորձին խմբ այնպիսի նոր և ինքնուրոյն խաղի ձեւ է ցոյց տալիս, որ բոլոր դերասաններն էլ զմայլում են և դրոշմում նորան արտիստ անունը:

Ներկայացումը շատ յաջող է անցնում և գերասանական խոռումը յլշեալ պիէսները կրկնում է երկրորդ անգամ:

Չորրորդ ներկայացման համար հոգաբարձութիւնն ընտրում է Արագ. Հէքիմեանի «Արտաշէս և Ալթենիկ» պատմական ողբերգութիւնը: Սակայն պիէսի դերերի բաժանումը վճռական դեր է խաղում: Դա կապւած էր մի հիմնական հարցի հետ: Որոշւած էր Շահիմաթունեանին և Զմշկեանին, որոնք մի ամպլուայի գերասաններ էին համարւում, մի պիէսում նրանցից մէկին առաջնակարգ դեր յանձնելիս, միւսին չտալ երկրորդական դեր: Թատրոնի ընդհանուր կառավարիչ Խզմիրեանը և խմբի ոչժիօր Մարկոս Աղաբէկեանը խախում են այդ որոշումը: Շահիմաթունեանին յանձնում են Արտաշէսի պատմախառնական առաջնական դերը, իսկ Զմշկեանին նշանակում աննշան և երկրորդական դերերից մէկը: Զմշկեանը հրաժարւում է իր դերից և ահա բարձրանում սաստիկ աղմուկ: Հոգաբարձուները բաժանում են երկու կուսակցութեան: Բաժանում են և գերասանները: Ոմանը պաշտպանում են Զմշկեանին, ումանք էլ դատապարտում նրա վերաբերմունքը:

Բաժանումն աւելի խորացնում և փոխադարձ յարաբերութիւններն աւելի է սրում մի այլ անսպասելի հանգամանք: Հոգաբարձութիւնն իզմիրեանի առաջարկութեամբ որոշում է գերասան-դերասանուներին բաժանել զանազան կարգերի և վարձատրել ներկայացումներից ստացւած եկամտից իւրաքանչիւրին իր ընդունակութեան համաձայն: Այսպէս՝ գերասանուներին մէկ-մէկ ներս է կանչում միւս սենեակը և առաջարկում՝ կարդալ և ստորագրել:

Այսպիսի ակտիւ գերասանները՝ Զմշկեանը,

Սուբիասեանը, Կուսիկեանը և Մանդինեանը, իսկ հոգաբարձուներից Միքրիմանեանն ու Շաղինեանը հոգաբարձութեան որոշումը գտնում են միանգամայն ապօրինի և բողոքում այդ անարդար վճռի դէմ: Այդ էական հարցի առիթով էլ Մողնութաղում, Պերճի անւանաւած մասնաւոր ուսումնարանում, տեղի է ունենում հոգաբարձութեան արտակարգ նիստը: Այդ նիստին հոգաբարձուներից մասնակցում են միայն հինգ հոգի: Հաւաքւում են նաև բոլոր գերասան - գերասանուները: Նիստը բացւելուց առաջ Գ. Զմշկեանը ներկայանում է թատրոնի կառավարիչ Գրիգոր Խզմիրեանին և իր ընկերների կողմից բողոքելով հոգաբարձութեան որոշման դէմ, յայտնում, որ՝

- Ա) Հոգաբարձուներն այն ժամանակ միայն կարող են նախապատել երկու հաւասար ոյժ ունեցող գերասանուներից մէկին միւսից, երբ նրանք վարձեն բոլոր խմբի անդամներին առնելի պահիկով:
- Բ) Օր. Գայիխանէլ գերասանական ընդունակութիւնն աւելի բարձր է, քան տիկ. Մէլիք - Նազարեանի:
- Գ) Թատրոնական ներկայացումներից ստացւած գումարների կարգավորութեան իրաւունքը յանձնել գերասանական խմբին:

Նեցի ես, որ հոգաբարձութեան արած վճռով ես գտնում եմ անկանոն և կողմնապահ, աշացի և սաստիկ վրդոված ստորագրեցի. «Համաձայն չեմ, Գ. Զմշկեան»: Ստորագրեցի և դուրս եկայ, պինդ խփելով դուռը ետեւիցս:

Զմշկեանից յետոյ մտնում է Ամ. Մանդինեանը և ստորագրում նոյնը: Համա-



Ա. Մամդիմեան — Կակուկ («Պէպօ»)

ձայնում են միայն Յ-Դ հոգի, իսկ միւսները զրում են. «Համաձայն չեմ»:

1865 Թիվական
2018 Դիկլարանիսն

1865 թւականին Թիվֆլիսում հայ թատրոնի ըննադատական պայքարը թեւակում է մի նոր շրջան: Վաթունական թւականների առաջին շրջանի թատրոնական գրա - ըննադատական է գա, որ զրսեւորում է նոր ձեւով և բովանդակութեամբ:

Ում ծառայեցնել թատրոնը, ինչպիսի՞ բովանդակութիւն և երանգ տալ թատրոնի ներքին կառուցւածքին, ինչպէս և միւս առաջնակարգ գերասանները, ստանում են երկրորդ կարգի վարձատրութիւն:

— Ես ձեզ յայտնեցի, պարոն, պատասխա-

լի՞զմ, թէսումանտիզմ-ահա այն հրատապ, կարեւոր հարցերը, որոնք նորից են յուղում և զբաղեցնում ժամանակի թատերասէրներին, գերասաններին ու թատրոնական գործիչներին։ Այդ հողի վրայ էլ դարձեալ առաջ են գալիս թատրոնական երկու տարբեր կուսակցութիւններ, երկու հակագիր հոսանքներ - ազատամիտ, առաջադիմական ուղղութիւնը և նրա դէմ կանգնած պահպանողական հնապաշտ ուղղութիւնը։ Եւ սկսում է պայցարը։ Այդ սուր պայցարի արդիւնքն է յօրսի դեկլարացիան։ Դա «Մեղու Հայաստանի» լրագրի (1865 թ. թ. 4, Յունաար, էջ 28) խմբագրութեան ուղւած ընդարձակ մի գեկուցում է։ Դա գործունէութեան մի ամբողջ ինքնուրոյն ծրագիր է, ուր լուսաբանում են ժամանակի թատրոնական կեանքը յուղող մի շարք հիմնական և առաջնակարգ հարցեր։ Այդ նամակն առանձին արժէք և նշանակութիւն է ստանում հէնց նրանով, որ նրա տակ տեսնում ենք թիֆլսի հայ թատրոնի չորս զլիքաւոր դերասանների - Զմշկեանի, Ամերիկեանի, Սուրբիասեանի և Մանղինեանի ստորագրութիւնները։

ի՞նչ է զէկլարացիայի նպատակը, ի՞նչ
հիմնական խնդիրներ են շօշափում այդ-
տեղ թիֆլիսի թատրոնի յայտնի գերա-
սանները, ի՞նչպիսի հարցեր առաջադրում:
Նպատակը մի է, յեղափոխել, յեղաշր-
ջել թատրոնը, տալ նրան ուրոյն ձեւ, որոշ
դէմք ու կերպարանք, էլ աւելի բարձրա-
ցնել նրա հեղինակութիւնը: Ավայան չորսի
համար գլխաւորն ազգային թատրոնը չէ,
այլ ոգին, ուղղութիւնը: Թատրոնը պիտի
ունենայ մի հաստատ ուղղութիւն, պիտի
ունենայ իր սեփական գիծը: Այդ գիծը
ուշալիքն է: Ահա ի՞նչ են ուղում նրանք
հայ թատրոնից: Եւ կանգնելով ուշալիքմի
առողջ զծի վրայ, պայքար են ծաւալում
ազգային – պատմական պիէսների և ընդ-
հանրապէս կեղծ – դասական, ոօմանտի-
կական ուղղութեան դէմ: Նրանք իրենց
պայքարին տալիս են հասարակական լայն
ընոյթ: Հրապարակ են գալիս մամուլի մէջ

և պարզում իրենց նպատակը, լուսաբանում իրենց ուղղութիւնը, որպէսզի բոլորը ծանօթանան և տեսնեն, թէ Թիգլիսի հայ թատրոնն ի՞նչ թերութիւններ, բացեր և ցաւոտ կողմեր ունի, որպէսզի բոլորն էլ ըմբռնեն, թէ ինչպիսի՞ հրատապ, անհետաձգելի և հրամայական խնդիրներ են դրւած թատերական վարչութեան, գերասանների առաջ. բոլորը զիտակցեն, թէ ի՞նչ պիտի անել այդ թատրոնը հարւածային կարգով, արմատապէս վերակառւցելու, հաստատուն և լուրջ հիմքերի վրայ գնելու համար:

Ո՞ւմ յայտնի չէ, որ թիֆլիսի թատրոնն
ունի տարիների պատմութիւն, բայց թէ հա-
սարակական տեսակէտից ի՞նչ պատկեր է
ներկայացնում այդ թատրոնը, ոչ ոքի
համար էլ պարզ չէ։ Դեռ հասարակու-
թիւնը չի հասկացել այդ թատրոնի նպա-
տակը։ զեռ չի ըմբռնել նրա բարձր նը-
շանակութիւնը և արժանաւորապէս չի
գնահատել։ ինչով բացատրել այդ հան-
գամանքները։ Նախ և առաջ նրանով, որ
թատրոնը թիֆլիսի հայերի համար մի նոր
երեսյթ է ու նիւթ է իրրեւ հետաքրքր
մի նորութիւն թատրոնը շուտով դարձաւ

ժողովրդի խօսակցութեան առարկան, բոլորն էլ սիրեցին թատրոնը, գնահատեցին. ոչ որ թերութիւն չի նկատեց, բարեկիութուններ չառաջարկեց. նոյնիսկ թատրոնի անունով տեղի ունեցան ճաշեր, քինզալեան լուսաւորութիւններ և հանդէսներ, սակայն հասարակութեան ոգեւորութիւնը շատ կարճ տեւեց, ժողովուրդը շուտով սառեց թատրոնից, նա առաջւայ սիրով էլ չի յաճախում թատրոն: Անհրաժեշտ էր թատրոնը հասարակութեան համար պահանջ դարձնել, նրան սիրել տալ բեմը: Բայց հօ չէր կարելի ժողովրդին ստիպել, որ սիրէ թատրոնը: Ինքը թատրոնը պիտի մօտենայ բուն ժողովրդին, իրեն սիրելի դարձնի հասարակութեանը, որպէսզի նա յօժարակամ յաճախէ թատրոն: Դա է թատրոնի զարգացման, յառաջադիմութեան առաջին և կարեւոր պայմանը:

— Բայց ժողովուրդը չի կարող ստիպի իրան, — զրում են գէկլարացիան ստորագրող գերասանները, — որ սիրէ հայերէն թատրոնը, պէտք է որ ինքը թատրոնը ապացուցէ, թէ ինքը սիրելի է, պէտք է ժողովուրդը թատրոնը ազատ ման գայ՝ նրա մէջ զւարձութիւն, բաւականութիւն գտնելով և չէ թէ ազգասիրութեան համար, կամ թէ չէ հնդուր համար, որ մէկը խնդրում է միւսից, որ նա թատրոն գնայ: Ուրեմն կրկնում ենք բատրոնի առաջի պայմանն է, որ ժողովուրդը յօժարակամ այցելուրիւն անէ բատրոնին:

որոնք չունեն ընդունակութիւն և պատրաստութիւն գործ կատարելու և, ընդհակառակը, խոչընդուռ են հանդիսանում, արգելքներ առաջ բերում: Զեն թողնում, որ թատրոնն «ազատ, իրա սեփական հնարքներով առաջ գնայ և էղպէս ուրեմն առաւել բարոյական զօրութիւն ստանայ ժողովրդի մէջ»: Կարո՞ղ է այդպիսի հաճամանքներում թիֆլիսի հայ թատրոնը բարգաւաճել, նւաճումներ անել: Կարո՞ղ է ծառայել իր բարձր կոչմանը: Ի հարկէ, ոչ: Ահա թէ ինչու թիֆլիսի հայ թա-

Սակայն ինչո՞ւ թատրոնն առաջւայ փայլը չունի, ինչո՞ւ ժողովուրդը նախկին ոգեւորութեամբ ու սիրով թատրոն չի յա-ճախում, ինչո՞ւ է նա սառել թատրոնից: Պատճառները պարզ են: Որովհետեւ թա-տրոնը չունի որոշ գոյն, չունի իր սեփա-կան ոճը: Թատրոնական բեմի վրայ իրա-կան ուղղութեան, ոչալական գեղարւեստի փոխարէն տիրում է պատմական ուղղու-թիւնը, ֆրանսիական ուսմանտիկ, սիօ-լաստիկ արւեստը: Որովհետեւ թատրոնի գլուխ կանգնած տասներկու հոգաբարձու-ները ոչ միայն ոյժով են տոմսակ ծախում, այլև և անվիրջ բեմադրում են (անհամ) աշնի ու անճառնի տրաքէդիաներ, կարծես թատրոնը ժողովրդական լսարան լինի, ուր զասախօսում են հայոց պատմութիւնը»:

— «Թատրոնն... էնպէս հեռացաւ իր ճշշմարիտութիւնից, որ կարծես թէ զամի առւղիտօրիխա դառաւ, որտեղ կարգում են հայոց պատմութիւնն»։

Բայց միթէ միայն գրանք են թիֆլիսի
հայ թատրոնի ցաւոս, բացասական երե-
ւոյթները։ Միթէ ուրիշ թերութիւններ և
բացեր չկան։ Անկասկած կան։ Ուելի յու-
զիչն ու անմիտիթարականն այն է, որ այդ
թատրոնն ազատ չէ, այլ «ապեկի» տակ
է զրւած, կաշկանդած է հոգաբարձուների
սպանիչ եսականութեամբ, կամայականու-
թիւններով։ Եւ չորս դերասանները պա-
տերազմ են յայտարարում ոչ միայն թա-
տրոնի հին ուղղութեան, ումանափամի, այլ
և այն հոգաբարձուների դէմ, որոնք չեն կա-
տարում իրենց պարտականութիւնը, գերը,

— «Եւ գրանց համար բոլորը մէկ է տրագեա-
դիա լինի, թէ կոմեղիա, թէ հայերէն լեզւաւ
լինի ներկայացրած, թէ ջինաց լեզւաւ. միայն
էդ լեզուն նրանք հասկանային, մի խօսքով
թատրոնը դրանց համար մտաւորական կերա-
կուր է: Դրանց համար է, որ մենք զլսաւո-
րապէս աշխատում ենք և կամենում ենք ըստ
կարեաց բաւականացնէլ ժողովրդի էդ մասը,
դրանց համար ենք ներկայացրէլ «Սէր և նա-
խապաշարմունք», «Ով որ քու բարը չէ,
նրա հիդ մի ձգվի», ու դրանց համար ենք
պատրաստում «Կրէջնսկու հարսանիքը»,
«Գոն ցեզար դը Բազան»:

Հասարակութեան երկրորդ խաւը, որ
մեծամասնութիւնն է, կանգնած է ուժան-
ափամի զրոշի տակ. նա ցանկանում է, որ
ներկայացւեն միայն ազգային պատմական
տրագէդիաներ, «կամենում է, որ հայերէն
թատրոնը ազգասիրութեան համար լինի
և որ ներկայացւեն ուրիշ ոչինչ, քան ազ-
գային պատմական տրագէդիաները»: Այ-
հա հասարակութեան այդ խաւի ուժան-
ափկ պահանջների, նրա ազգասիրական
թթու տրամադրութիւնների դէմ անողոք,
անհաշտ պայքար են յայտարարում չորսր:

Ո՞վ մնաց: Միայն երկրորդ խաւը: Դա
հասարակութեան տգէտ, նախապաշարւած
վերին շերտն է, որը թէեւ հայ է, բայց
ատում է հայերէն լեզուն, ատում հայ
զիրն ու զբականութիւնը:

— «Ժողովրդեան երրորդ մասը, որովհետեւ
խիստ նախապաշարված է, չի կարողանում
յայտնել թէ ինչ է պահանջում հայերէն թա-
տրոնից. գեռ վարագոյրը չքարձրացած էդ
մասը թատրոնում նստած առաջուց վճռում
է թէ պիեսան էլ վատ է, խաղարկութիւնն
էլ վատ, որովհետեւ որ խաղարկութիւնը հա-
յերէն լեզւաւ կլինի, խաղացողները հայք են»:

Այս այսպիսի աննպաստ հանգամանք-
ներում է գտնուում թիֆլիսի հայ թատրոնը:
Այդ թատրոնը յետ է մնում ժամանակի գե-
զարւեստական պահանջներից: Բայց ո՞ր
մէկ ցաւոտ, բացասական երեւոյթը ար-
ձանազրել: Ո՞նց չի յիշել ոչպէրտուարը, *
ո՞նց չարձանազրել զերասանների, մա-
նաւանդ զերասանուհիների բացակայու-
թիւնը:

— «Թէպէրտուար համարեա թէ չունինք,
զերասանների թիւը քիչ է, զերասանուհինե-
րի - առաւել քիչ»:

Զնայած այս բոլոր թերութիւններին ու
բացերին, այնուամենայնիւ զերասանական
ընկերութիւնն առաջ է տանում թատրո-
նական գործը և անխնայ, աննկուն ու յա-
մառ պայքար մղում ոչ միայն տնտեսական
դժւարութիւնների, այլ և ոչպէրտուարի և
զերասանական կազմի որակի բարձրա-
ցման համար: Նա աշխատում է թատրոնը
դնել այնպիսի հիմքերի վրայ, որ կախում
չունենայ ժողովրդից, «այլ, ընդհակառա-
կը, ժողովուրդը կարեւորութիւն ունենայ
նրանից»: Թատրոնը կարողանայ ստեղծել
յաճախողների կազմակերպւած հասարա-
կութիւն: Այդ զծի վրայ էլ հետզհետէ
կանգնում է թիֆլիսի հայ թատրոնը: Հե-
տեւանըը: Այդ հանգամանքը խոշոր ազ-
գեցութիւն է ունենում ոչ միայն ոչպէր-
տուարի և ստեղծագործական մեթոդների
վրայ, այլ և եկամտի: Երկայացումները
տալիս են մօտ 250 մանէթ: Դա ինքնին
խոշոր և նշանակալից նւաճում է:

— «Եթէ ամենայն խաղարկութիւնը միջին
թուվ մեզ տալիս է 250 մանէթ, էդ արդէն
մեծ նշանակութիւն ունէ մեզ համար: Եթէ
ժողովուրդն իր բարի կամքով էդքան գու-
մարի ստոմակ է առնում, միթէ չունինք ի-
րաւոնք ասել, որ ժողովուրդը շատ կամ քիչ
պատիւ, սէր է զգում դէպի թատրոնը»:

ԹՈՎՄԱՍ ԵՒ ՊԱՅՄԱՆ ՖԱՍՈՒԼԵՍԱԾԵՍՆ- ՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1865 թւի Ապրիլին զերասանական
խմբի վրայ աւելանում են նոր ոյժեր:
Պօլսից գալիս են թիֆլիս և իջնում «Կով-
կազ» հիւրանոցը զերասանուհի տիկ. Փայ-
ծառ և նրա ամուսինը թուվմաս ֆասու-
լեաճեանները: Արեւմտահայ առաջին գե-
րասան-զերասանուհիներն են դրանք, որ
արհամարհելով ահազին տարածութիւննե-
րը և ճանապարհորդական դժւարութիւննե-
րը, անցնում են կովկաս: Նորեկ զե-
րասանների գալուստը ողջունում է «Մեղու-
չայաստանի» լրագիրը և յոյս յայտնում,

որ թիֆլիսի թատրոնասէր հասարակու-
թիւնն իր ջերմ և սիրալիք ընդունելու-
թեամբ նրանց կը զնահատի:

— Շատ անգամ մենք յիշել ենք, - զրում
է «Մեղու» խմբագրութիւնը, - մեր լրագրի
թերթերի մէջ զալուստը նոր այցելուների,
որոնք նշանակութիւն ունեցել են կամ ունին
մեր ազգի մէջ որեւիցէ եղանակով: Այս ան-
գամ ահա կարող ենք ուրախացնել թիֆլի-
զու հայ հասարակութիւնը հաղորդելով նրան
տիկին Պայծառ գերասանուհու և նորա ա-
մուսիւմ քաղաքանցի մօտենականցի մօտե-
րում քաղաքս համակարգ: Տեղույս հայ հա-
սարակութիւնը, որն որ այս վերջին տարի-
ներում այնքան սէր ցոյց տևեց գէպի հայ-
կական թատրոնն իւղանակ է աղաղացնելու
մէջ աղաղացնելու մէջ աղաղացնելու:

«Մեղու» հազրորդած լուրն ամենից շատ
ուրախացնում է զերասան գ. Չշմկեանին
և նա իր ընկերների՝ Արտաշէս Սուրեն-
սեանի, Միհրդատ Ամերիկեանի և Ամիրան
Մանդինեանի հետ այցելում է նորեկ հիւ-
րերին, որպէս զի միացած ոյժերով աւելի
զարկ տան թիֆլիսի հայ թատրոնին:

— Բաղկեցինք գուոը, - զրում է Չշմկեա-
նը, - գուրս եկաւ մէկ նիհար և բարակ մի-
ջահասակ երիտասարդ:

Մենք հարցրինք Պօլսից եկած զերասան-
ներին:

— Հրամեցէք, հրամեցէք, տաց նիհար
պարոնը և մենք մտանք սենեակը:

Առաջին խկութիւնը, պիտի խոս-
ուովանիմ, շատ ծանր թւաց ինձ: Ենինեակի
մէջ, բացի մեզ ընդունող նիհար երիտասար-
դից, կային մէկ շատ նիհար սեւ աշքունքով
ապջիկ, սեւ, խիտ խանոսւփնթոր եղած մա-
զերով և մէկ հասակաւոր և երկայն սպիտա-
կախան մօրուքով մէկ ուրիշ մարդ, ծալա-
պատիկ նստած սենեակի մէկ անկիւնում
յատակի վերայ: Ենինեակում թագաւորում
էր սաստիկ անկարգութիւն:

Մեզ ընդունող պարոնը, որ ինքը պ. Ֆա-
սուլեաճեանցն էր, իսկոյն մօտեցաւ սեղանին,

ծոցից մէկ կտոր թուղթ հանեց և սկսեց կար-
գալ այնպէս, ինչպէս զինուորների կազար-
մաներում կարդում են ֆէլդֆէլները զին-
ուորների քնելուց առաջ, որ իմանան, թէ
բոլոր զինուորները ներկայ են թէ ոչ:

— Զմշկեան, կարդաց նա: Ես գլուխ տւի:

— Ամերիկեանց, Սուրենականց ինքնակոչ ֆէլդֆէլները և
ամէն մէկ ազգանունը արտասանելուց յետոյ,
նա քննում էր մեզ ամէն մէկին, ինչպէս



Թ. Ֆասուլեաճեան

քննում են հիւրանոցներում կասկածաւոր
կերակուրները: Վերջապէս պարոնը հրամի-
րեց մեզ նստել և սկսեցաւ խօսացութիւնը:

Այդ խօսակցութեան ընթացքում էլ
կնքում են բերանացի պայման - գարնանը
տալ երեք ներկայացում և եկամոււր բա-
ժանել երեք հաւասար մասի. մուտքի երկու
երրորդ մասը տալ թատրոնական ընկե-
րութեանը և երրորդ մասը ֆասուլեաճեան-
ներին: Ուոշում են առաջին անգամ բե-
մազրել «Թուղթ խաղացողի կեանքը»,
ապա՝ «Լիւլրեցիայ Յօրջիա», «Երկուսս
էլ բաղցած ենք, երկուսս էլ փող չունինք»,
(Հեղ. Թասուլեաճեանցի) և Վիկտոր Հիւգօի
«Հրանիլից» (Թարգ. Պալասանեանի),
«Կոյրին զաւակը» եւայլն:

Ֆասուլեաճեանների թիֆլիսի զերասա-
նական խմբին մասնակցելու լուրը թա-
տրոնասէր հասարակութեան մէջ առաջ է
բերում աւելի լուրի լայն հետաքրքրութիւն գէպի
թատրոնը: Բոլորն էլ անհամբեր սպասում
են նորեկ զերասանների բեմ բարձրանա-
լուն: Սակայն ֆասուլեաճեանները կար-

զանում են որեւէ նորութիւն, արմատա-
կան յեղաշընում առաջ բերել թիվլիսի
հայ թատրոնի դերասանական արեւոտի
բնագաւառում; Ո՞րն էր նրանց շկոլան,
ուղղութիւնը:

ՕՐՈՒԱՆ ԳՐՔԵՐ

ԼԵՂՈՆ Պ. ԳԱԼԵՎՐԵԿՈՎԻ ԱՆ. «Մանկական
Գոստիարակութիւն աան մէջ» Պահպէ ապ. «Աա-
հակ - Մեսոպու» ։ 1934:

Դա այն շրջանն էր, երբ զերասաններից շատերը հանդիսականների վրայ ազգեկուն նպատակով իրենց գերերն արտասանում էին երգեցողական, ողբերգական առօգանութեամբ: Բեմի վրայ իշխում էր կեղծ գէկլամացիան: Դա հնացած մի մեղոթ էր, որ վաղուց արտաքսւած էր յայտնի թատրոնական բեմերից: Դա մի մեղոթ էր, որ բթացնում էր գերասանի ընդունակութիւնը, նրա յատկութիւնները: Դերասանն այդ կեղծ ձեւերը գարձնելով իր համար մեքենայական արհեստ, չէր կարողանում մշակել և զարգացնել իր մէջ թագնւած դերասանական առանձնայատկութիւնները: Բայց չնայած դրան, այդ շկօլն ունէր իր ջերմ պաշտպանները: Այդ դպրոցին էր պատկանում թովվմաս Ջասուլեաճեանը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆ

ՀԱՅ ՊՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Մխիթարեան Ուխտիս հայկական մատենադարանին զրկեցէք ձեր բոլը հրատարակութիւններէն (գիրք, թերթ, օրագիր եւն.) գրախօսելու կամ համարժէք գըքեր ստանալու պայմանով։

Մի մունաք որ այդ կերպով սատարած պիտի ըլլաք միանգամայն ողբ. Հ. Ա. Ղազիկեանի կիսատ թողած հսկայ «Հայկ. մատենագիտութեան» ամբողջական հրատարակութեան առաջն հայթայթելով եւ աշխատողները քաջալերելով։ ԽՄԲ.

Հեղինակը կ'ըսէ թէ. «Մանուկը պզտիկ
մարդ մըն է, և պէտք ունի ոչ թէ բռնա-
կալ տիրոջ մը, այլ ազնիւ առաջնորդի
մը»։ Անտարակոյս ազնիւ միջոցը՝ բռնա-
կալութենէն շատ աւելի նպաստաւոր է
տղուն գաստիարակութեան համար. սա-
կայն խիստ և անոյշ միջոցները պէտք
է զործածուին, նկատի առնելով տղուն
կամ աշակերտին հոգեկան դրութիւնը.
պարագաներ կան՝ որ թոյները հիւանդին
փրկարար կ'ըլլան։

Ծնողը և ուսուցիչ հարկ է շատ մեծ
խնամքով ուսումնասիրած ըլլան տղուն
հոգեբանութիւնը. ծնողը և դաստիարակ
համաձայն գտնուելու են դաստիարակու-
թեան գործին մէջ:

Տղուն կրթութիւնը օգտակար ըլլալու համար, հարկ է ճանչնալ անոր բնաւութիւնը : Գալէմքեարեանի զիրքը չի լերլուծել տղոց հոգեբանութիւնը, այլ

ցոյց կու տայ, թէ ինչ միջոցներ գործածելու է որ դաստիարակութիւնը օգտակար ըլլայ: Փորձառու դաստիարակ մը ծնողքէն աւելի համոզուած է որ տղուն կեանքը տարօրինակօրէն շատ բարդ է և իրացնէ դժուարահաճակնալի: Երբ բժիշկը չի հասկընար հիւանդին հիւանդութիւնը, ինչպէս կրնայ օգտակար ըլլաւ ան, այսպէս և դաստիարակը. եթէ չէ կրցած հասկնալ տղուն կեանքին հոգեբանութիւնը, և բնաւորութեան բարդութիւնը՝ անկարելի է որ լաւ առաջնորդ մ'ըլլայ ան:

Գալէմբեարեան իր այս երկով ցոյց կուտայ մանկավարժական այն սխալ դրութիւնները՝ ուսկից բացարձակօրէն պէտք է սոսկալ, որպէս զի տղան մեծնայ աներկիւզ, երջանիկ ըլլալու յոյսերով, և ընկերութեան օգտակար ըլլալու ազնուական գաղափարով. կը գրէ ան. « Մենք պիտի ցուցնենք թէ մանուկ մը կեանքի մէջ ունի այնքան տագնապներ, որքան չափահաս մը, և այնքան նեղութիւններ որ չափահաս մարդիկ անկարող են հասկընալ: Հետեւաբար այս անհասկանալի մանուկ անհատը վերլուծելով հոգեբանական տեսակէտէ՝ պիտի ջանանք համառօս կերպով՝ հայ ծնողքին և հայ ուսուցիչին դիւրահասկանի ընել զայն »:

Որով ցոյց կու տայ թէ տղան ի բնէ
ինչ թերութիւններ ունի և թէ ինչպէս
կարելի է դարմանել զանոնք: Կը թելա-
դրէ որ դաստիարակը տղան չշփացնէ, և
ոչ ալ բռնակալ ըլլայ: Միջին ճամրան
միշտ լւա է. սակայն ըստ տղուն բնաւո-
րութեան, դաստիարակը անոյշ կամ խիստ
ըլլալու է:

Ծնողաց և գաստիարակին բնաւորութիւնը շատ մեծ ազդեցութիւն ունի տղունքը, անոր համար ծնողը և գաստիարակ ամէնէն տռաջ իրենց իրենց թերութիւնները տեսնել և շտկելու են, եթէ իսկապէս կ'ուզեն որ իրենց տղաքը ուզիդ ու մաքուր սկզբունքներով մեծնան։ Հեղինակը շատ խելացի կ'ըսէ։ Եթէ կ'ուզես տղուդ սխալ գործելակերպը շտկել և փոխել բանի մը մէջ, նախ փոխիչ քու ընթացք

այդ բանին մէջ, յետոյ տղութ: Անոնց
սխալները ուրիշ բան չեն, եթէ ոչ իրենց
ծնողաց՝ ինչ որ իրենք ընդօրինակած են
անոնցմէ, և չենք կրնար այս սխալները
ուղղել՝ եթէ երբեք չկարենանք նախ ինք-
զինքնիս ուղղել »:

ինչպէս ծնողըին թերութիւնները՝ այսպէս նաև դաստիարակինները փոխանցական են։ Կրթական մակարդակը մեր մէջ երթաւով կը ցանայ փոխանակ բարձրանալու, զի անհատական թերութիւններով մեծցող ծնողը մը, կամ դաստիարակ մը երբեք իր թերութիւնները չի տեսներ, որովհներգինը չ'ուղղեր. «Կոյր կուրի» առաջնորդներ են մեր առաջնորդները. որովհը Աւետարանին բնականաբար եթէ խորիսորատէ խորիսորատ կ'իյնանք, զարմանք չէ այդ։

Մատենախօսականս վերջացնելէ առաջ դիտել կու տամ հեղինակին, թէ տղոց սեռային խնդիրներու շուրջ գիտական - բարոյական յատուկ հայերէն զրցեր ոչ թէ չունինք այլ և չափազանց ունինք, մանաւանդ ամէնէն ընդարձակը Բժ. Ն. Տաղաւարեանի. «Առողջապահութիւն»ը, «Բնական պատմութիւն. մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն»: Վինֆիլտ Հօլի գործը թրգմ. Բիւզանդ կէօզիւաէօյիւ քեանէ: Տօքթ. Յ. Պալեանի՝ «Բժիշկի մը արատները Պատանիներուն»: «Մտերիմ

զըսոյցներ եւն. » հեղ. Փղշտացի. և այլն։
Տղուն կրթութեան ամէնէն էական սը-
ռունդն է Քրիստոնէական դաստիարակու-
թիւնը. դժբախտաբար այդ գերին մէջ կը-
պակսին թէ՛ ծնողը և թէ՛ դաստիարակ-

Խ. Պ. ՎԱՀԱՄԵՍԻՆ. «ՄԵԽԻԼ ՏԱՐ» 1934 ապ. կ.
ՏԵՇԵԼԵՅ, Պէտական

Յուշաբան կէմեանի Մամիկին՝ Աննա
Մ. Տէվէճեանին: Մէնիկ ծառը կը գտնուի
Արաբկիր, սարահարթի մը վրայ. որուն
«Մօտը չըկան տուն կամ հիւղակ, տը-
լոց ճըխանքը կայտուուն,

ինք կեցեր հոն միայնակ, դիմացն երկնի
և հովուն » :